Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 11

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստի

<<19>> հուլիսի 2024թ. ք. Երևան

2024 թվականի հուլիսի 19-ին տեղի ունեցավ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստը:

Հանձնաժողովի 6 անդամներից նիստին մասնակցում էին՝

Ա. Խաչատրյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ, հանձնաժողովի նախագահի տեղակալ
Ա. Ստեփանյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության լիցենզավորման և թույլտվությունների բաժնի պետ, հանձնաժողովի անդամ
Խ. Սողոմոնյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության պետ, հանձնաժողովի անդամ
Ռ. Այվազյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության բաժնի պետ, հանձնաժողովի անդամ:

Նիստը նախագահում էր հանձնաժողովի նախագահի տեղակալ Ա. Խաչատրյանը: Նիստից բացակայում էին հանձնաժողովի նախագահ Ա. Սիմոնյանը և հանձնաժողովի անդամ Տ. Գասպարյանը: Նիստն արձանագրում էր Ա. Ստեփանյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Մ

1.Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության N ՏՄՏՋ 00047 լիցենզիան և լիցենզիայի ներդիրն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված 1 հայտի քննարկում:

2. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության N ՏՄՏՋ 00089 լիցենզիայի նոր ներդիր տրամադրելու համար ներկայացված 1 հայտի քննարկում:

3. «ՋԻՋԻ ԽԱՉՄԵՐՈՒԿ», «ՔԱՌ ՍԵՐՎԻՍ ՍԻԹԻ», «ԷՅ ԷՄ ԷՅ ՄՈԹՈՐՈՍ» ՍՊ և «ՆԻԻԷԼԵԿՏՐԱՄԱՇ» գիտա-արտադրական ձեռնարկություն ՓԲ ընկերությունների նկատմամբ հարուցված վարչական վարույթների շրջանակում լսումների անցկացում:

1.«ՇԻՆ ԱՎՏՈ» ՍՊԸ-ին տրամադրված՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության N ՏՄՏՋ 00047 լիցենզիան և N 0001 ներդիրն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված դիմումի քննարկում:

Քննարկվեց՝ «ՇԻՆ ԱՎՏՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2024 թվականի հուլիսի 8-ի դիմումը՝ Կազմակերպության տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության N ՏՄՏՋ 00047 լիցենզիան և N 0001 ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպության 2024 թվականի հուլիսի 8-ի դիմումը՝ Կազմակերպության տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության N ՏՄՏՋ 00047 լիցենզիան և N 0001 ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը՝ N ՏՄՏՋ 00047 լիցենզիայի և N 0001 ներդիրի բնօրինակը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ԴԱՎԻԹ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲԸ	4 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Համաձայն «Լիցենզավորման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

2. Անհատ ձեռնարկատեր ԱԶԱՏ ՎԱԼԵՐԻԿԻ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԻՆ տրամադրված՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության N ՏՄՏՋ 00089 լիցենզիայի թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի N 0001 ներդիրն ուժը կորցրած ճանաչելու և ունիվերսալ հոսքագծի ներդիր տրամադրելու համար ներկայացված դիմումի քննարկում:

Քննարկվեց՝ անհատ ձեռնարկատեր ԱԶԱՏ ՎԱԼԵՐԻԿԻ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԻ /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2024 թվականի հուլիսի 10-ի դիմումը՝ Կազմակերպության տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության N ՏՄՏՋ 00089 լիցենզիայի թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի N 0001 ներդիրն ուժը կորցրած ճանաչելու և ունիվերսալ հոսքագծի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից անհատ ձեռնարկատեր Ազատ Վալերիկի Սարիբեկյանին 2023 թվականի հունիսի 29-ին տրամադրվել է տեխնիկական զննության գործունեության N ՏՄՏՋ 00089 լիցենզիան և N 0001 ներդիրը թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի համար: Կազմակերպության կողմից լիցենզիայի տրամադրման հայտին կից փաստաթղթերի տվյալների համաձայն՝ ներկայացված արատորոշման միջոցները համապատասխանում էին ունիվերսալ հոսքագծի համար սահմանված պահանջներին, սակայն ներկայացված գործունեության վայրի չափերը, մասնավորապես՝ երկարությունը 18.50 մետր էր, ուստի Կազմակերպությանը տրամադրվել է իրավունք՝ իրականացնելու բացառապես թեթև տրանսպորտային միջոցների տեխնիկական զննություն: Այժմ Կազմակերպությունը նույն գործունեության վայրի շինությունը ավելացրել է ևս 8 մետրով և ընդհանուր երկարությունը ապահովել 26.50 մետր՝ այն համապատասխանեցնելով ունիվերսալ հոսքագծին ներկայացվող պահանջին, որն է՝ երկարությունը՝ նվազագույնը 24 մետր:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 08072024-05-0024 վկայականը և վկայականին կից շինությունների հատակագիծը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ԱՁ ԱԶԱՏ ՎԱԼԵՐԻԿԻ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ	4 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Համաձայն «Լիցենզավորման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի
նախագահի տեղակալ Ա. Խաչատրյան

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյան